

## Բժշկական տեքստի որոշ լեզվաոճական առանձնահատկությունների շուրջ

Երևանի Պետական Համալսարան

Օհանյան Մարիաննա

mar-ohanian@yandex.ru

Լեզվի հիմնական գործառույթը, նրա հասարակական ամենաառաջնային և կարևորագույն հատկանիշը հաղորդակցումն է /Ժինկին 1982/: Լեզուն հաղորդակցման միջոց լինելուց բացի նաև մտածողության միջոց, մտածողության ձև է, որը սակայն բացի հաղորդակցման գործառույթից հասարակության մեջ, մարդկային գործունեության բնագավառում ունի նաև ոչ պակաս կարևոր հատկանիշներ, գործառույթներ, ինչպիսիք են հաղորդումը և ներգործումը/ Չակովսկայա 1977, Փասպարյան 2000, Եզեկյան 2007/: Լեզվի հաղորդակցման և ներգործման գործառույթները հավասարապես իրագործվում են գեղարվեստական գրականության մեջ, մինչդեռ տեղեկատվական տեքստում հաղորդակցումն իրագործվում է հաղորդման գործառույթի շնորհիվ:

Սույն հոդվածի նպատակն է ցույց տալ, որ բժշկական ուղղվածություն ունեցող տեքստերը հետաքրքիր լեզվական նյութ են պարունակում: Կփորձենք լեզվաոճական վերլուծության միջոցով վեր հանել այն կայուն ոճակագմիչ և շարահյուսական տարրերը, որոնց առկայության շնորհիվ բժշկական տեքստը կարելի է դիտարկել իբրև գիտական ոճի ուրույն դրսևորում: Նկատի ունենալով խոսքի դրսևորման եղանակները՝ գործառական ոճերը ամենից առաջ բաժանվում են երկու խմբի՝ գրքային և խոսակցական, ապա նաև՝ մենախոսական և երկխոսական, որտեղ կարևորը տվյալ պահի հաղորդակցման գործընթացն է, խոսքային իրավիճակն ու իրադրությունը:

Գործառական ոճերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, իրեն հատուկ խոսքային կառույցները, լեզվական միջոցների գործածության յուրահատուկ համակարգն ու հաճախությունը, այսինքն՝ յուրաքանչյուր ոճ ունի իր միասնական, ոճակագմիչ համակարգը, իր ենթաոճերը, որոնք կոչվում են նաև խոսքային ոճեր:

Գիտական ոճն ունի կիրառության լայն ու բազմապիսի ոլորտներ: Այս ոճով են ներկայացվում մենագրությունները, դասագրքերը, ատենախոսությունները, դասախոսությունները, գիտական բանավեճերը, գիտական հոդվածները, հաղորդումները և այլն: Գիտական ոճը կարող է ունենալ գրավոր և բանավոր դրսևորումներ, սակայն այն առավելապես հանդես է գալիս գրավոր եղանակով և հիմնականում մենախոսական բնույթ ունի: Մ.Ն. Կոժինան գիտական ոճի բնորոշ հատկանիշներն է համարում իմաստային ճշգրտությունը, պատկերավորության բացակայությունը, թաքնված հուզականությունը, շարադրանքի օբյեկտիվությունը, խստությունը, որոնք սակայն չեն բացառում այս ոճին յուրահատուկ հուզականությունը / Կոժինա, 1977 /: Գործառական ոճերի համակարգում գիտական և գեղարվեստական ոճերը հակադիր բևեռներ են և հաճախ հանդես են գալիս որպես համեմատության հակադիր եզրեր:

Գիտական ոճում առավելապես գործում է լեզվի հաղորդման գործառույթը, այն ոճական երանգավորման առումով համեմատաբար չեզոք է, ուստի և հեղինակային անհատականությունն ու ինքնատիպությունը հատուկ չեն խոսքային այս տարատեսակին:

Այստեղ կարևորը ընդհանրացումն ու վերացարկումն է, երևույթների, փաստերի պատճառահետևանքային կապը, նրանց փոխադարձ կապակցվածությունն ու տրամաբանական համոզիչ պատճառաբանվածությունը:

Բժշկական տեքստի լեզվի և ոճի վերաբերյալ հարցերի քննարկումը իմաստ ունի սկսել տեքստի տվյալ տարատեսակում իրացվող խոսքի գործառույթների քննությունից:

Բժշկական տեքստը բնույթով տեղեկատվական է, սակայն հաղորդման գործառույթը մաքուր ձևով չէ, որ այստեղ իրագործվում է, քանի որ ներազդման պահը նույնպես կարևոր է. էական տեղ ունի նաև համոզման գործառույթը: Ըստ էության, տեղեկատվություն հաղորդելիս, անկախ այն բանից ընդգծվում է բժիշկ-բժիշկ թե բժիշկ-հիվանդ հարաբերությունը, տեղի է ունենում ներազդման գործընթաց, որն ավարտվում է համոզման գործընթացով: Կարելի է կատարել եզրահանգում. արդյունավետ բուժմանը նպաստում է միայն հիվանդի խոր հավատը բուժող բժշկի նկատմամբ, իսկ եթե չկա համոզվածություն, ապա չի կարող և լինել հավատ: Բժշկական խոսքի ճիշտ իրացումը, հատկապես, պահանջում է առավելագույն հստակություն, տրամաբանական կառուցվածք, պատճառահետևանքային սահունություն, որոնք կնպաստեն տվյալ խոսքային տարատեսակի հեշտ ընկալմանը: Այս բնագավառում ընկալումը ունի խիստ կարևոր նշանակություն, որովհետև այն նպատաուղղված է ոչ միայն գիտության զարգացմանը: Ամենակարևորն այստեղ մարդկային գործոնն է :Սխալ կամ ոչ լիարժեք ընկալումը կարող է հանգեցնել

ա/ մարդկային կյանքի կորստի,

բ/ մարդկային կյանքի խեղման,

գ/ հիվանդի մոտ հոգեբանական ընկճվածության առաջացման,

դ/ ապաքինման հույսի կորստի և այլն:

Ելնելով այս հանգամանքից հարկ ենք համարում մանրամասն ուսումնասիրել ոճակագմիչ ու կառուցվածքային այն առանձնահատկությունները, որոնք նշանակալից են բժշկական տեքստի կազմության համար, ընդ որում, բժիշկ-բժիշկ հարաբերությունները կարող են արտահայտվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքի միջոցով, մինչդեռ բժիշկ-հիվանդ հարաբերություններին ավելի բնորոշ է բանավոր արտահայտումը: Սույն հոդվածի շրջանակներում մենք կանդրադառնանք միայն բժշկական գրավոր գրքային տեքստերին՝ վերցված Laser Surgery in Gynecology and Obstetrics գրքից: Որպես նյութ ընտրել ենք գինեկոլոգիայի բնագավառը:

Այժմ անդրադառնանք գիտական բառապաշարին, ընդհանրապես, և բժշկագիտական բառապաշարին, մասնավորապես: Գիտական ոճն ունի իր ուրույն բառապաշարը, որով էլ տարբերվում է գործառական մյուս ոճերից: Գիտական ոճում տեղ են գտել բազմաթիվ փոխառություններ, նորակազմություններ, օտարաբանություններ՝ պայմանավորված գիտական առաջընթացի հետ: Նոր երևույթների ու գաղափարների ներմուծումը օբյեկտիվորեն ենթադրում է նոր բառերի ստեղծում, որոնք ժամանակի ընթացքում կամ արմատավորվում են լեզվում կամ անհետանում, կամ կարող են ձեռք բերել խիստ դրական, ինչպես նաև խիստ բացասական երանգավորում: Գիտական ոճի բառապաշարի հիմնական շերտը, որը միաժամանակ կարող է ոճակագմիչ նշանակություն ունենալամեն մի խոսքային տարատեսակի համար, կազմում են տերմինները, զբաղմունքային կամ մասնագիտական

բառերը /տերմիններին վերաբերող հարցերի մասին ավելի մանրամասն տես Տրոյանսկայա 1981, ինչպես նաև ([www.sipnop.com](http://www.sipnop.com)):

Գիտական խոսքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մասնագիտական տեքստերում կարևորվում են տերմինները, տերմինաբանական կապակցությունները, տերմինակերպ կապակցությունները և շարահյուսական որոշակի կառույցներ /Գասպարյան 2007/:

Բժշկական տեքստերում, ինչպես վկայում են ուսումնասիրությունները, տեղ ունի նաև լատիներենից փոխառված ծավալուն բառապաշերտը: Բժշկականության լեզուն գնում է դեպի միջազգայնացում. շատ դեպքերում նույն լատինական արմատը հանդիպում է անգլերենում, ռուսերենում, հաճախ նաև հայերենում: Գիտական տեքստերում գործածվող բառապաշարի հիմնական առանձնահատկությունները բխում են տվյալ ոճի շարադրման յուրահատկություններից: Այս առումով անմասն չէ նաև բժշկական տեքստերի բառապաշարը: Ըստ գոյություն ունեցող տեսակետի գիտական տեքստի բառապաշարը բաղկացած է երեք անհավասար մասերից. ա) ընդհանուր գործածական բառեր, որոնք կազմում են լեզվի հիմնական բառապաշարը, բ) «ընդհանուր գիտական բառապաշար», որը պարունակում է այն բառերն ու կապակցությունները, որոնք հատուկ են գիտության լեզվին ընդհանրապես,

գ) տերմիններ և տերմինաբանական բառակապակցություններ, որոնք գործածվում են հաղորդելու գիտական տեղեկատվություն / Եզեկյան, 2007, Ռազինկինա 1972, 1989, 2004 /:

Նյութը, որ մենք ուսումնասիրել ենք, պարունակում է բառապաշարի վերը նշված բոլոր շերտերը: Բժշկական տեքստի շարադրանքում շատ մեծ է տերմինների և տերմինաբանական բառակապակցությունների թիվը: Բառարաններում ամրագրված տերմիններից բացի գոյություն ունի նաև բժշկական սլենգ, որին, սակայն մենք չենք անդրադարձնա սույն հոդվածի սահմաններում, քանի որ այն մեկ այլ ինքնուրույն ուսումնասիրության առարկա է: Ի դեպ, մեր կողմից ընտրված տեքստերի վերլուծության արդյունքում պարզվեց, որ գերիշխող են ընդհանուր գործածական բառապաշերտը ներկայացնող բառերն ու բառակապակցությունները /to compare, to find, using, although, the difference/:

Ծավալային առումով հաջորդը հատուկ գիտական բառապաշարի՝ տերմինների շերտն է: Ընդհանուր գիտական բառապաշարը, որ բնորոշ է բոլոր գիտական տեքստերին, կազմում է ամենափոքրը /to be published, on comparison of, created by, significant difference, the result of/:

Տերմինների բառաշերտը ներառում է ոչ միայն բժշկության բնագավառին առնչվող բառեր ու բառակապակցություններ ընդհանրապես, այլև մասնավոր գինեկոլոգիական ոլորտը ներկայացնող բառեր ու բառակապակցություններ /infertility surgery, tubal patency, microelectrocautery, standardized injury, microdiathermy needle/:

Գոյականների մի խումբ / study, rabbit, needle, group, repair, tube, surface etc./ գործածվելով մի որևէ բժշկական տերմինի հետ դառնում են բժշկական գիտական բառապաշարին բնորոշ տերմինաբանական բառակապակցություններ, ինչպիսիք են. Clinical study, rabbit model, microdiathermy needle, laser group, hydrosaphinx repair, fallopian tube, ovarion surface. Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված բառակապակցական շարույթները /շարույթների տեսության հետ կապված մանրամասները տես Ջահուկյան 2003 / ներկայացվում են գոյական-գոյական և ածական-գոյական հարաբերությունների միջոցով:

Ի տարբերություն բառերի, որոնք սովորաբար հանդես են գալիս հոմանշային որոշակի շարքերով, տերմիններն իրենց բնույթով չեն կարող հոմանիշներ ունենալ, տարբերվել հուզաարտահայտչական տարբեր գունավորումներով /գիտական տեքստում հոմանիշների և նրանց ընտրության խնդրի հետ կապված մասնավոր հարցերի մասին տես Գասպարյան

2007- 2008 /: L. Եզեկյանը կհսում է Բուդաղոկյան այն հանրահայտ կարծիքը, որ տերմինը սովորական բառերից տարբերվում է նաև նրանով, որ տերմինի և հասկացության կապը անմիջական է, իսկ բառի համար բառիմաստի հասկացության հետ անմիջական կապը պարտադիր պայման չէ, քանի որ գիտական բառապաշարի հիմնական առանցքը կազմող տերմինները մենիմաստ են, չունեն փոխաբերական իմաստներ և հուզական երանգավորում: Պատճառահետևանքային կապը և տեքստակազմական միջոցների ոճական արժեքը շատ մեծ է բժշկական տեքստում: Մեր օրինակում հատկապես հաճախակի են հանդիպում although բառով սկսվող նախադասությունները, with, even with, still, in ...կառույցով ներմուծվող տեղի պարագա կապակցությունները և այլն: Բժշկական տեքստերում շեշտադրված է նաև in patients with ներմուծող կառույցը: Մեր ասածը ավելի ակնառու դարձնելու համար բերենք օրինակներ.

1. **Although** the surgery- to- conception interval tended to be shorter in the laser group, the difference did not achieve statistical significance.
2. **Still** no difference could be shown in the two techniques.
3. **Even with** the needle cautery, there is a sense of pressure perceived as one contacts the tissue with the cautery tip.
4. **In patients with** bipolar tubal disease Bellina achieved an intrauterine pregnancy rate of 36%, and in sterilization reversals, 71%.

Գիտական ոճի տեքստերում /հատկապես մեր ուսումնասիրության տակ գտնվող նյութի մեջ/ շատ են կիրառվում կրավորական կառույցները, որը վկայում է այն մասին, որ գիտական ոճին բնորոշ է քերականական միջոցների և ձևերի խնայողությունը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ այդ խնայողությունն ուղղված է ավելի քիչ բառերի միջոցով տեղեկատվությունը ավելի հստակ և դիպուկ դարձնելուն, քանի որ ոչ տեղեկատվական ծանրաբեռնվածություն կրող բառերը խճողում են խոսքը և թուլացնում հստակությունը:

e.g.

1. Since 1982, a number of clinical studies **have been published** on the results achieved with the CO<sub>2</sub> laser in infertility surgery and on comparisons of laser and microelectrocautery.
2. The first group(January 1977 through December 1978) **was treated** by electrosurgical salpingostomy and the second group (January 1979 through January 1981) **was treated** by CO<sub>2</sub> laser salpingostomy.

Շրջադասության դեպքերը նույնպես շատ հաճախ են կիրառվում մեր նյութի մեջ, և ինչպես արդեն նշել ենք հիմնականում դրանք արտահայտվում են in ... կառույցների միջոցով:

e.g.

1. **In** a prospective, randomized human study, Tulandi compared the result of salpingovariolysis using the CO<sub>2</sub> laser and the microdiathermy needle; the pregnancy rate was the same in both groups after 2 years.

2. **In the 73 patients** having repair of hydrosalpinges, 88% had at least one tube or their only remaining tube patent on follow-up hysterosalpingogram or laparoscopy.
3. **In his initial article** on this subject, he found that the pregnancy rates were similar but that the surgery-to-conception interval was shorter in the laser surgery group after a 1 – year follow-up.

II դերբայի կիրառությունը ևս հաճախակի է բժշկական տեքստերում: Ըստ որում, նախադասության մեջ II դերբայը լինում է որոշիչ, որը հանդիպում է մեծ մասամբ որոշյալից առաջ: Որոշյալին հաջորդող II դերբայն ունենում է մեկ կամ ավելի լրացումներ՝ կազմելով դերբայական դարձված:

e.g. Using a rabbit model to compare **standardized** injuries **created** by either the CO<sub>2</sub> laser or microelectrocautery, found no significant difference in the degree of adhesion formation.

I դերբայով կառույցները հիմնականում դերբայական դարձվածներ են:

e.g. In a prospective, randomized human study, Tulandi compared the result of salpingovariolysis **using** the CO<sub>2</sub> laser and the microdiathermy needle.

Հարկ է նշել, հիմնական շարահյուսական առանձնահատկությունը մեր ուսումնասիրած նյութի մեջ շրջադասությունն է: Կայուն շարահյուսություն /ենթակա, ստորոգյալ, լրացումներ և այլն/ հազվադեպ են հանդիպում, հիմնականում նախադասությունները շրջադասված են:

Մեր ուսումնասիրած տեքստերում էական ոճական արժեք են ներկայացնում նաև պարզ ընդարձակ և բարդ՝ բայց կարճ նախադասությունները:

e.g. 1. The overall pregnancy rate was 31.5%. 2. In the patients who were followed at least 5 years, the overall pregnancy rate was 31.5% and the term pregnancy rate was 28.6%. 3. The ectopic rate in the entire group of 73 patients was 9.6% of patients.(7 cases). 4. Thirty-nine patients had reversal of sterilization. 5. Twenty-one of 25 patients having tube-tube anastomosis and 10 of 14 having tube-uteris anastomosis had intrauterine pregnancies.

Հատկանշական է որոշիչ երկրորդական նախադասություն պարունակող բարդ նախադասությունների գործածությունը ինչպես օրինակ վերը նշված տեքստահատվածում բերված երկրորդ նախադասությունը:

Ամփոփելով կարելի է ասել հետևյալը.

- Բժշկական տեքստի համար էական ոճական արժեք ունեն ինչպես շարակարգային ածական-գոյական, գոյական-գոյական հարաբերությունները, այնպես էլ որոշ քերականական կառույցներ:
- Գիտական ոճի տեքստերում /հատկապես մեր ուսումնասիրության տակ գտնվող նյութի մեջ/ շատ են կիրառվում կրավորական կառույցները, որը վկայում է այն մասին, որ գիտական ոճին բնորոշ է քերականական միջոցների և ձևերի խնայողությունը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ այդ խնայողությունն ուղղված է ավելի քիչ բառերի միջոցով տեղեկատվությունը ավելի հստակ և դիպուկ դարձնելուն,

քանի որ ոչ տեղեկատվական ծանրաբեռնվածություն կրող բառերը խճողում են խոսքը և թուլացնում հստակությունը:

- Շրջադասության դեպքերը նույնպես շատ հաճախ են կիրառվում մեր նյութի մեջ, և ինչպես արդեն նշել ենք հիմնականում դրանք արտահայտվում են in ... կառույցների միջոցով:
- Բժշկական տեքստերում նախադասության մեջ II դերբայը լինում է որոշիչ, որը հանդիպում է մեծ մասամբ որոշյալից առաջ: Որոշյալին հաջորդող II դերբայն ունենում է մեկ կամ ավելի լրացումներ՝ կազմելով դերբայական դարձված: I դերբայով կառույցները հիմնականում դերբայական դարձվածներ են:
- Հիմնական շարահյուսական առանձնահատկությունը մեր ուսումնասիրած նյութի մեջ շրջադասությունն է: Կայուն շարադասություն /ենթակա, ստորոգյալ, լրացումներ և այլն/ հազվադեպ են հանդիպում, հիմնականում նախադասությունները շրջադասված են:
- Էական ոճական արժեք են ներկայացնում նաև պարզ ընդարձակ և բարդ՝ բայց կարճ նախադասությունները:

The aim of this article is to show that medical texts contain a lot of linguistic material. By means of linguostylistic analysis we'll try to bring to light some stylistic and syntactic elements, with the help of which medical texts can be viewed as a special manifestation of a scientific style. As a material we have chosen the gynecological branch.

Целью данной статьи является показать, что тексты, имеющие медицинскую направленность, представляют собой интересные лингвистические материалы. С помощью лингвостилистического разбора постараемся выявить те устойчивые ступеобразующие и синтаксические элементы, наличие которых позволяет рассматривать медицинский текст как особый научный стиль. Материалом для разбора выбрали область гинекологии.

## Գրականություն

1. Աստղիկ 17-18, Սահակ Պարթև, Երևան., 2007, էջ 134-145.
2. Գասպարյան Ն. Հ. Արտոնագրային մասնագրի լեզվաոճական առանձնահատկությունները /մենագրություն, Երևան.,2007.
3. Եզեկյան Լ. Ոճագիտություն, Երևան., 2007.
4. Զահուկյան Գ. Բ. Շարահյուսական ուսումնասիրություններ, Երևան., 2003.
5. Гаспарян С. К. Фигура сравнения в функциональном освещении. Ереван., 2000.
6. Жинкин Н.И. Речь как проводник информации. Москва., 1982.
7. Кожина М.Н. Стилистика русского языка, Москва., 1977.
8. Разинкина Н.М. Стилистика английской научной речи, Москва., 1972.
9. Разинкина Н.М. Функциональная стилистика английского языка. Москва., 1989.
- 10.Разинкина Н.М. Функциональная стилистика. Москва., 2004.
- 11.Троянская Е.С. Общая характеристика лексики немецкой научной речи. В кн.: Разновидности и жанры научной прозы. Лингвостилистические особенности научного текста. Отв. Ред. Цвиллинг М. Я., М., 1981.
12. William R. Keye, Jr. Laser surgery in Gynecology and Obstetrics. Chicago, London, Boca Raton, Littleton, 1990.

## Ինտերնետային էջեր

<http://www.sipnop.com>

<http://www.onto-med.de/publications/index.jsp>

<http://www.instit.talk.jsp>